ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-21-23-1

ք. Երևան 12-ը մայիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Ղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 52 423 000 (հիսուներկու միլիոն չորս հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ 2021թ. հունվարի 18-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ավիացիայի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Էջմիածին, Տեր Գաբրիելյան 22
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 220213330370100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 04715288
ՀՎՀՀ 02522157	Տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
	Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 1
N ՄԱԾՁԲ-21-23-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Գնման առարկան	Չափի միավոր	Տեխնիկական պայմանները
Կայանների վերանորոգում և տեխնիկական սպասարկում, այդ թվում՝			Ավիացիոն հատուկ վերգետնյա կապի և ռադիոտեխնիկական միջոցների տեխնիկական նկարագրերին և վերանորոգման տեխնիկական փաստաթղթերին համապատասխան
1.	ՍԿՊ -11 եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	
2.	ԱՊՊԱ-80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	
3.	Ռ-845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	
4.	Ռ-845 (ստացիոնար) ռ/կ կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	
5.	ԱՌՊ -11 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	
6.	Ռ/Կ ՊԱՌ-10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	
7.	Ռ/Կ ՊԱՌ10 «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	
8.	ԱՌՊ 80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	
9.	Տեղանիշ ՌՓ Ε615 «ԲՊՌՄ», «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	
10.	Ռ/Կ ՊԱՌ -10 «ՕՊՌՍ» կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	
11.	Դիսպետչերական կառավարման վահանակ եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	
12.	Ռ/կ Բակլան-20 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	
13.	Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	
14.	Ռ/կ Բակլան-5 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	
15.	Ռ/կ Պոլյոտ-1 տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	
16.	Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	
17.	Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	
18.	Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	
19.	Հրամանատարաշտաբային մեքենաների կիսամյակային տեխնիկան սպասարկում	հատ	
20.	Շարժական հրամանատարական կետի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	
21.	ԱՊՊ-90 լուսատեխնիկական ապահովման համակարգի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	
22.	Կարճալիք «Կաշտան» ռադիոկայանի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	
23.	Մարկեր լուսատեխնիկական սարքավորման եռամսյակային սպասարկում	հատ	

Ծանոթություն.
- Ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ ՀՈՒ ավիացիայի վարչության կողմից նշված փաստացի վայրում:
- Ծառայությունը կատարողի կողմից պետք է իրականացվի իր տեխնիկական միջոցներով և անձնակազմով:
- Վերանորոգված և սպասարկված սարքավորումների շահագործման երաշխիքային ժամկետը 365 օր, ծառայության ընդունման օրվանից

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

№	Անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծառայությունների մատուցումը ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 15.12.2021թ.				Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/
				I	II	III	IV		
Կայանների վերանորոգում և տեխնիկական սպասարկում, այդ թվում		դրամ	1						**52423000**
1	ՍԿՊ -11 եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	8	2	2	2	2	580000	4640000
2	ԱՊՊԱ-80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	4	1	1	1	1	580000	2320000
3	Ռ-845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	1				1	726000	726000
4	Ռ-845 (ստացիոնար) ռ/կ կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	4	1	1	1	1	726000	2904000
5	ԱՌՊ -11 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	4	1	1	1	1	486000	1944000
6	Ռ/Կ ՊԱՌ-10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	4	1	1	1	1	575000	2300000

	Ռ/Կ ՊԱՌ10 «ԴՊՌՄ» եռամյակային տեխնիկական սպասարկում	հատ	8	2	2	2	2	575000	4600000
8	ԱՌՊ 80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	4	1	1	1	1	581000	2324000
9	Տեղանիշ ՌՓ Ε615 «ԲՊՌՄ», «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	8	2	2	2	2	358000	2864000
10	Ռ/Կ ՊԱՌ -10 «ՕՊՌՍ» կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	10	2	2	3	3	575000	5750000
11	Դիսպետչերական կառավարման վահանակ եռամսյակային տեխնիկական սպասարկում	հատ	12	3	3	3	3	580000	6960000
12	Ռ/կ Բակլան-20 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	4	2			2	72000	288000
13	Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	4	1	1	1	1	572000	2288000
14	Ռ/կ Բակլան-5 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	10	2	2	3	3	72000	720000
15	Ռ/կ Պոլյոտ-1 տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	6	2		2	2	67000	402000
16	Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	10	2	3	2	3	312000	3120000
17	Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	10	2	3	2	3	43000	430000
18	Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային տեխնիկական սպասարկում	հատ	4		2		2	262000	1048000
19	Հրամանատարաշտաբային մեքենաների կիսամյակային տեխնիկան սպասարկում	հատ	8	2	2	2	2	200000	1600000
20	Շարժական հրամանատարական կետի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	2		1	1		300000	600000
21	ԱՊՊ-90 լուսատեխնիկական ապահովման համակարգի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	3		1	1	1	290000	870000
22	Կարճալիք «Կաշտան» ռադիոկայանի տարեկան տեխնիկական սպասարկում	հատ	2		1	1		372500	745000
23	Մարկեր-Մ լուսատեխնիկական սարքավորման եռամսյակային սպասարկում	հատ	4	1	1	1	1	745000	2980000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

ԿԱՏԱՐՈՂ

«ՌԱԴԱՐ-ԱՎԻԱՆԵՐ ՓԲԸ» տնօրեն

Գ. ՊԱՀԱՐՅԱՆ

Հավելված 2
N ՄԱԾՁԲ-21-23-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 24.12.2021թ., ընդ որում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	ՍԿՊ -11 եռամսյակային տեխնիկական սպասարկում	45251167/1	1160000	1740000	4640000
2	ԱՊՊԱ-80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	45251167/2	580000	1160000	2320000
3	Ռ-845 ռ/կ տարեկան տեխնիկական սպասարկում	45251167/3			726000
4	Ռ-845 (ստացիոնար) ռ/կ կիսամյակային տեխնիկական սպասարկում	45251167/4	726000	1452000	2904000
5	ԱՌՊ -11 կիսամյակային տեխնիկական սպասարկում	45251167/5	486000	972000	1944000
6	Ռ/Կ ՊԱՌ-10 «ԲՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	45251167/6	575000	1150000	2300000
7	Ռ/Կ ՊԱՌ10 «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	45251167/7	1150000	2300000	4600000
8	ԱՌՊ 80 եռամսյակային տեխնիկական սպասարկում	45251167/8	581000	1162000	2324000
9	Տեղանիշ ՌՓ Ε615 «ԲՊՌՄ», «ԴՊՌՄ» եռամսյակային տեխնիկական սպասարկում	45251167/9	716000	1432000	2864000
10	Ռ/Կ ՊԱՌ -10 «ՕՊՌՍ» կիսամյակային տեխնիկական սպասարկում	45251167/10	1150000	2300000	5750000
11	Դիսպետչերական կառավարման վահանակ եռամսյակային տեխնիկական սպասարկում	45251167/11	1740000	2900000	6960000
12	Ռ/կ Բակլան-20 կիսամյակային տեխնիկական սպասարկում	45251167/12	144000	144000	288000
13	Շարժական ռ/կ ՊԱՌ-10 ռադիոփարոսի տարեկան տեխնիկական սպասարկում	45251167/13	572000	1144000	2288000
14	Ռ/կ Բակլան-5 կիսամյակային տեխնիկական սպասարկում	45251167/14	144000	360000	720000
15	Ռ/կ Պոլյոտ-1 տարեկան տեխնիկական սպասարկում	45251167/15	134000	268000	402000
16	Ռ/կ Պոլյոտ-2 կիսամյակային տեխնիկական սպասարկում	45251167/16	936000	1560000	3120000
17	Ռադիոընդունիչ Ռ-872 տարեկան տեխնիկական սպասարկում	45251167/17	129000	215000	430000
18	Ռադիոպելենգատոր ԱՌՊ-7 կիսամյակային տեխնիկական սպասարկում	45251167/18	524000	524000	1048000
19	Հրամանատարաշտաբային մեքենաների կիսամյակային տեխնիկան սպասարկում	45251167/19	400000	800000	1600000
20	Շարժական հրամանատարական կետի տարեկան տեխնիկական սպասարկում	45251167/20	300000	600000	600000
21	ԱՊՊ-90 լուսատեխնիկական ապահովման համակարգի տարեկան տեխնիկական սպասարկում	45251167/21	290000	580000	870000
22	Կարճալիք «Կաշտան» ռադիոկայանի տարեկան տեխնիկական սպասարկում	45251167/22	372500	745000	745000
23	Մարկեր-Մ լուսատեխնիկական սարքավորման եռամսյակային սպասարկում	45251167/23	745000	1490000	2980000

Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարության տեսուչ

Ա. ՄԱՆՈՒՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ տնօրեն

Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 3
N ՄԱԾՁԲ-21-23-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ՄԱԾՁԲ-21-23-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու)
(Պատվիրատուի անունը) և
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն